ամենուն ծանօթ է։ Եւ այս անկէ առաջ կու գայ որ արիւնը՝ թէ նուրբ շընչերակներէն և թէ նուրբ երակներէն ելլելով մէկ մէկու կը խառնուի և կ'ըլլայ այն կարմիր արիւնը որ կը տեսնես։ Սոյնպիսի տեսակ խառնուրդն է դարձեալ որ ամէն վէրքէ կը վազէ, մեծ եղեր է վէրքը կամ պզտիկ, և ասոր պատճառաւ է որ մարդիկ համաձայն կ'ըսեն թէ արիւնը կարմիր է, որ ըստ ինքեան անանկ չէ, ոչ երակաց արեանը նկատմամբ և ոչ շնչերակաց։ Առջինը սև է, ինչպէս կրնաս ստուգել, թէ որ սիրտ ընելով դիտես մէկու մը վրայ՝ որմէ երակահատութեամբ արիւն հանեն։

Այդպիսի առթի մէջ միշտ երակ մըն է որ կը բանան. և շնչերակաց վրայ ըսածներէս դիւրաւ կրնաս պատճառը իմանալ։ Կը տեսնես այն ատեն որ խայթուածքէն սև կարմիր գոյնով ցայտուածք մը կը նետուի, որ շատ աւելի սև է քան թէ կարմիր. այս է երակային արիւնը։ Բայց երբ դիպուածով շնչերակ մը կտրուի, մէջէն ելածը բոլորովին տարբեր է, վարդագոյն արիւն մըն է այն, փրփրալից, գրեթէ նման կաթի՝ որուն մէջ կարմիր գոյն հալեցուցած և գաւազանիկներով զարկած ըլլան. և ասոր ահա շնչերակային արիւն կ'ըսեն։

Զկայ աւելի դիւրին բան, ինչպէս կը տեսնես, քան շնչերակ մը երակէն որոշել. շատ է մէջի բովանդակածը դիտել։ Երբ արիւնը մեր գործարանաց մէջ կը հասնի որ զանոնք սնուցանէ, շնչերակային է. երբ զանոնք սնուցանելէն ետև՝ կ'ելլէ մէջերնէն կ'երթայ, երակային փոխուած կ'ըլլայ։ Ի՞նչ ընելու կ'երթայ արդեօք սրտին մէջ, դէպ ուր ճամբայ կ'ելլէ։ Նոր մղում մը գտնելու կ'երթայ որ զինքը թոքերը ձգէ, ուր տեղ նորէն շնչերակային կը փոխուի. որ ըսել է գործարանները նորէն սնուցանելու կարող կ'ըլլայ։ Այս բանիս մէջն է շրջագայութեան բոլոր դաղտնիքը և պատճառը։

Այդ բանը շուտով կը զուրցուի, սիրելի օրիորդիկ, այլ ես գրաւաղիր կ'ըլլամ որ դու բան մը չես հասկընար ատկէ։ Մի՛ ամընչնար ատոր համար։ Կարելի չէ ատկէ բան մը հասկընալ քանի որ չենք սորված թէ Շնչառութիւնը ինչ է, և այս պատճառաւ հարկ է այս արդելքին առջին տեղիք տանք։

Ուրեմն յաջորդ անգամուն կը թողունք ձեռք զարնել սննդառութեան այս երրորդ մասին. և եթէ առջի երկուքը քեզ զբօսեցուցեր են, կը յուսամ որ այս երրորդը քեզ չձանձրացնէ։

Կը շարունակուի։

ԶԳԻՆԻՆ ՀԷՆՑ ԽՄԵՑԷՔ ՈՐ ԶԱՌԻԾՆ ՍՊԱՆՆԷՔ

Թագաւոր մի հրաման արար նախպներացն [1], թէ ամեն նախպն օր մի զիմ որդին 'ի պատիւ տարէք։ Եւ տանէին։ Եւ մէկ օր մէկ նախպն 'ի տունն տարաւ, և յերիկունն երեր 'ի դուռն 'ի ներս երաց [2], և գնաց։ Եւ որդի թագաւորին խիստ գինով էր. և 'ի բաղի [3] ելաւ, և գինին 'ի վրան շրջեցաւ. և անկաւ 'ի ցեղեցքն [4] 'ի վայր և մեռաւ. և մէկալ օրն գտին մեռեալ։ Եւ թագաւորն հուքմ [5] արար, թէ 'ի յիմ իշխանութիւնս՝ ինչ որ այդի կայ՝ զամեն քակեցէք, և զկարասին կոտորեցէք. — և արարին այնպէս. — զի կորստեան որդւոյ իմոյ եղև (պատճառ)։ Եւ այրի կին մի մէկ որդի ունէր. զիւր հնձանն փլուց, և զգինին պահեց. և յամենայն վաղընէ և յերիկունն՝ 'ի վերայ հացին մէկ երկու թաս կու խմէր որդին։ Եւ գիշեր մի 'ի դուրս ելաւ, և զթագաւորի զառիւծն սպաննեց։ Եւ թագաւորն վաղիւն կանչեցոյց, թէ Զիմ առիւծն՝ ով որ սպաններ է՝ թող գայ որ խալաթեմ [6]։ Երեկ [7] այրի կինն և որդին. հարցաւ

1 Իշխան, պաշտօնեայ։
2 Ընաւ։
3 Խաղալու, պարելու։
4 Տանիք, երդիք։
5 Հրաման։
6 Խիլաթիմէ, պատուոյ զգեստ հագցընել։
7 Եկաւ։

թագաւորն, թէ ի՞նչխի կարացար զիմ առիւծն սպանել։ Եւ ասաց մայրն, թէ Գինով եմ սնուցեր. և ասաց զպատճառն։ Եւ հրաման արար թագաւորն, թէ Այդի տնկեցէք. ապա զգինին հէնց խմեցէք՝ որ զառիւծն սպաննէք. չիխմէք հէնց՝ ինչ իմ որդին եղաւ։

ԹԻԿԱՐ

ՄՐՋՆԱԿԵՐ ԱՐՋԸ

Այս կենդանւոյս շատ անյարմար կու զայ արջ անունը տալ, որովհետև ա՚նատաանն[1] ըսուած կենդանեաց դասուն կը վերաբերի. սակայն Գերմանիա ասանկ անուն տուած են ասոր։

Անատամն ըսուած կենդանեաց դասն շատ զարմանալի ու կերպ կերպ է։ Ըստ մեծի մասին Պրազիլ կը բնակին. և լայնառնգունք կապկաց հետ՝ այն երկրին կենդանեաց գլխաւոր յատկութիւնը ներկայացնող կենդանիք են։

Եւ յիրաւի, յամբրագնացը, թամբուն և մրջնակեր արջը, այն կոյս անտառներուն բնակիչքն են, որ Ամազոնեաց և Օրենոք գետերուն երկու կողմէն, շատ մը հարիւրաւոր քառակուսի մղոն միջոց դրաւած են։ Եւ այս կարգի կենդանիներէ, որչափ ծանօթ է մեզի ցայսօր,



ՄՐՋՆԱ

1 Անատամունք անոր համար կ՚ըսուին որովհետև կամ ըստ մասին և կամ բոլորովին զուրկ են ակռաներէ։ Նախաջրհեղեղեան անատամունք շատ մեծահասակ կենդանիք էին. ինչպէս էին մեծագաղանը (Mégathèrium) և ատամնապեղը (glyptodonte)։